ՌԻՍՏՈՒԵՆԻՈՒՐՈՒՄԻՆ «ՑՍՊԵԼՈՒՄԻՑ» ՌԻՍԱԱԻՈՒՄԻՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՎԵՐԱԴԱՐՁԱՎ ՀԱՅԱՍՏԱՆ, ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Մարտի 29-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, վեցամսյա բացակայությունից հետո, Լոնդոն-Երեւան հատուկ չվերթի օդանավով ժամանեց «Զվարթնոց» օդանավակայան:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին ԱՄՆ-ի հայոց Արեւելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը, Տ. Բագրատ աբեղա Գալստյանը, Տ. Խորեն աբեղա Հովհաննիսյանը, Նորին Սրբության անձնական բժիշկ Բաֆֆի Հովհաննիսյանը, Վեհափառ Հայրապետի քույրը:

Օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եպիսկոպոսաց դասը, Գերագույն Հոգեւոր Խորհրդի անդամները՝ գլխավորությամբ Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի, ՀՀ վարչապետ Արմեն Դարբինյանը, Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, Արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը, Մշակույթի, սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար Ռոլանդ Շառոյանը, ՀՀ Կրոնի գործերի կոմիտեի նախագահ Լազար Սուջյանը:

Դիմավորողների ուղեկցությամբ օդանավակայանի բարձրաստիճան հյուրերի սպասասրահ հասնելուց հետո Վեհափառ Հայրապետի ողջույնի եւ շնորհակալության խոսքը ընթերցեց Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը:

«Փառք եւ գոհություն եմ տալիս Աստծուն, որ շնորհ արեց ինձ վերադառնալու իմ հայրենիք՝ Հայաստան եւ իմ հոգեւոր տունը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Անցնող տարուայ սեպտեմբերից մինչեւ այսօր զբաղուում էի ի Միացեալ Նահանգս Ամերիկայի, որտեղ Նիւ Եորքում երկու վիրաբուժական գործողություններ ունեցայ բերանիս մէջ տեղ շինած քաղցկեղի մի վէրքի կամ ուռուցքի հեռացմանքով: Թէեւ տակաւին չեմ վերագտել իմ առողջութիւնը, բայց ցանկանալով ցանկացայ ապաքինման շրջանը անցկացնել իմ հարազատ տան մէջ:

Առաջին հերթին ցանկանում եմ իմ շնորհակալութիւնները եւ գնահատանքը յայտնել բոլոր նրանց, ովքեր այս շրջանին աղօթեցին, բարի մաղթանքներ ղրկեցին իմ առողջութեան վերականգնման համար, սկսեալ մեր Հանրապետութեան նախագահից մինչեւ ամենէն պարզ քաղաքացին, մեր բարեբաստիճան հոգեւոր եղբայրներից մինչեւ պարզ հաւատացեալը:

Աղօթում եմ, որ առողջութեան անփոխարինելի բարիքները վայելէք դուք բոլորդ հայրենիքում, Արցախում թէ արտասահմանում:

Աղօթում եմ, որ Ձեր անհատական, անչնչական առողջութեան հետ միասին Աստուած առողջութիւն պարգևի մեր հայ ազգին եւ հայրենիքին:

Ս. Ջատկուայ տօնը ահա մօտենում է: Իմ հայրական իւսքը այդ առիթով ուղղելու եմ չեզի. մեր մամուլի, հեռուստատեսիլի եւ ֆայնանսիիւռի միջոցաւ:

Թող Աստուած շէն պահի ազգն ու Եկեղեցին, պետութիւնն ու ժողովուրդը»:

Օդանավակայանից Վեհափառ Հայրապետը շքախմբով ուղեւորվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.U.O.S.S. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին խանդավառութեամբ ու ցնծութեամբ դիմավորեցին Մայր Աթոռի միաբանները եւ հավատացյալ ժողովրդի հոծ բազմությունը: Նորին Սրբության Մայր Տաճար մուտք գործելու պահին եւս մեկ անգամ ներդաշնակորեն միահյուսվեցին Տաճարի ավետող զանգերի ղողանջները ու «Հրաշափառ» շարականի ոգեշնչող հնչյունները, եւ միաբանական թափորը Վեհափառ Հայրապետին առաջնորդեց Մայր Տաճար: Նորին Սրբությունը կանգ առավ Իջման Ս. Սեղանի առջեւ, խոնարհվեց, ծունկի եկավ ու համբուրեց Սուրբ Խաչը:

Ապա Վեհափառ Հայրապետի՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին վերադարձի առիթով ողջ միաբանության ու ժողովրդի ուրախությունն ու ցնծությունն իր ողջույնի խոսքում արտահայտեց Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը.

«Վեհափառ Տեր,

Գերաշնորհ Սրբազան հայրեր, հոգեշնորհ հայրեր,

Մեր սրտերը բերկրանքով են լցված, եւ մեր աղոթքները օրհներգություն դարձրած բարբառում ենք. «Օրհնեալ որ գայ յանուն Տեառն, օրհնութիւն ի բարձունս» (Մատթ. ԻԱ 9):

Ծաղկազարդի այս խոսքերով, Վեհափառ Տեր, հանուն Գերագույն Հոգեւոր Խորհրդի, հանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգեւոր դասի ու պաշտոնեության, մեր հավատացյալ ժողովրդի, բարի վերադարձ ենք մաղթում Ձեզ ձեր տուն՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Գիտենք, որ կարոտել եք Մայր Տաճարի խնկաբույր մթնոլորտին, մեր հավատացյալ ժողովրդի ժպտուն ու աղոթասաց հայացքներին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի յուրաքանչյուր ծառին ու թփին:

Վեհափառ Տեր, ուզում ենք վստահեցնել, որ Մայր Աթոռը՝ իր միաբանությամբ ու հավատացյալ զավակներով, Ձերդ Սրբությանը նույնպես կարոտել են: Մենք մեր հավատացյալ զավակների հետ մշտապես աղոթում էինք Ձերդ Սրբության համար՝ իմանալով, որ ծանր ու դժվարին երկու վիրահատություններ անցկացրիք: Փառք ենք տալիս Աստծուն, որ ունկնդիր եղավ մեր աղաչանքներին ու բարի վերադարձ պարգեւեց Ձերդ Սրբությանը: Հավատում ենք, որ Տերը շուտափույթ ապաքինում պիտի շնորհի եւ Ձեր հայրապետական առաջնորդությամբ երկա՜ր-երկար տարիներ պիտի հովվի մեզ:

Վեհափառ Տեր, մեր աղոթքն ենք բարձրացնում առ Աստված՝ հայցելով, որ Տերը շեն ու ծաղկուն, պայծառ պահի Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը եւ առավել արգասաբեր դարձնի Ձեր հովվապետական գործունեությունը հայ ժողովրդի կյանքի անդաստանում:

Վեհափառ Տեր, բարի գալուստ Մայր Աթոռ Ս. Էջմիածին եւ քաջառողջ ու բազում տարիների կյանք»:

Այնուհետեւ Վեհափառ Հայրապետի շնորհակալական խոսքը՝ ուղղված միաբանությանն ու ողջ ժողովրդին. ընթերցեց ԱՄՆ-ի հայոց Արեւելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը.

Իջման Ս. Սեղանի առջեւ

«Մի անգամ եւս ծունկի եմ գալիս Իջման սրբազնասուրբ Սեղանի առաջ. եւ ողջ գոյությամբս փառք եւ գոհություն եմ ընծայում Բարդրիալն Աստուծոյ որ շնորհեց ինչ ողջամբ վերադառնալ ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին վեց ամիսների բացակայությունից յետոյ, զուտ առողջական պատճառներով. որոնց դուք արդէն ծանօթ էք եւ կարիք չկայ աւելին ասելու։

Այսօր Աստ Երկուշաբթի օր է։ Ահա մտել ենք մեր Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ամէնէն հոգեւից շաբաթուայ մէջ՝ յառաջիկայ Կիրակի տօնախմբելու համար մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի յարութեան հրաշագան դէպքը. որ սիրտն է քրիստոնէական մեր հաւատքին։

Թէեւ բժշկական տեսակէտից դիտուած՝ առողջական վիճակս չի վերականգնուել. բայց ամենախոր իղձս էր լինել իմ ու ամբողջ հայ ժողովրդի Հոգեւոր Տան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ եւ այստեղ անցկացնել ապաքինման ընթացքը. միասին տօնելով մահուան վրայ Քրիստոսի տարած յաղթանակը՝ Սուրբ Յարութեան տօնը։

Առաջին հերթին. ցանկանում եմ այս առաջին պահին իմ ջերմ շնորհակալութիւնները եւ բարդրագոյն աստիճանի գնահատանքը յայտնել Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միաբանութեան ուխտեալ անդամներին՝ արքեպիսկոպոսներին. եպիսկոպոսներին. վարդապետներին. աբեղաներին. սարկաւագներին. իմ բացակայութեան շրջանին իրենց ցոյց տուած նախանձախնդիր ոգուն եւ նուիրեալ աշխատանքին համար ի պայծառութիւն աստուածակառոյց Սուրբ Աթոռոյս։ Շնորհակալութիւններս նաեւ Հոգեւոր Գերագոյն Խորհրդին եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեանս մէջ գործող պաշտօնէութեան կամ անձնակազմի աւագ եւ կրտսեր անդամներին եւ Վանական Խորհրդին։ Հայրական ջերմ գնահատանքս նաեւ Այրարատեան Հայրապետական

Թեմի Առաջնորդական Փոխանորդ՝ Գերաշնորհ Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Ներսիսեանին. որ անցնող չորս ամիսների ընթացքում՝ 1 Դեկտեմբեր 1998-էն այս կողմ վարեց Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդի պաշտօնը Մեր տնօրինութեամբ եւ աշխատուրջ եւ եռանդուն ջանասիրութեամբ: Մեր ապաքինման այս շրջանին. երբ տակաւին լիովին ի վիճակի չենք կատարելու Մեր բոլոր պարտաւորութիւնները. նա կշարունակէ իր պաշտօնը:

Միրելիք. շատ դժուար օրերի միջից անցայ եւ էլի անցնում եմ առողջական տեսակէտից: Խորհրդածելու պահեր ունեցայ: Աւելի պայծառ դարձաւ ինչ համար այն սկզբունքը որ մարդ էակը. քրիստոնէայ մարդը. կամ հոգեւորական անչը իր իսկական բարեշրագոյն արժէքը կը գտնի պարտականութեան կատարման մէջ. կրկնում եմ՝ պարտականութեան կատարման: Պարտականութիւն չունեցող. պարտաւորութիւն չզգացող. պատասխանատուութեան պատրաստակամութիւն չունեցող անչին կեանքը երկրի վրայ խորթի կը նմանի. ըստ Սաղմոսերգուին բառերուն:

Լինի եկեղեցու մէջ. լինի պետութեան մէջ. լինի հասարակական ոեւէ կազմակերպութեան կամ հաստատութեան մէջ. մարդու կարողութիւնից աւելի քանկ է այդ կարողութիւնը պարկեշտ գործով. ամբողջական գործադրմամբ գործի վերածելու պարտաճանաչութիւնը: Կեանքին երկար տեւողութիւնից աւելի արժէք ունի կեանքի բովանդակալից լինելու հանգամանքը. ինչպէս շեշտակի կերպով ասել է Օրմանեան հոյակաւոր գիտնական-հոգեւորականը:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը իր ուխտեալ որդւոց պարտաճանաչ ու ամբողջանուէր ծառայութեամբ պիտի լինի «լոյսի փարոս». «յոյսի խորան». «սիրոյ օճախ». «արի արանց քաջ գործերու (արութեան գործոց) շքեղ հանդիսարան»: Եկէք բոլորս վերանորոգուած ոգիով նայինք կեանքին: Կեանքը ձրի տուրքն է Աստծուն: Բայց մի տուրք. որի հետ են կապուած պարտականութիւններ: Յիսուսանանք Աստուածաշունչի խօսքը. «Ծառայք անպիտանք եմք. զոր պարտէաքն առնել՝ արարաք» (Ղուկաս ԺԷ 10): Մենք անպէտք ծառաներ ենք. արժէք կ'ունենանք. երբ անենք այն. ինչ որ պարտաւոր ենք անել): Առողջութիւնը արժեւորել գիտնանք: Ամենից մեծ արժանիքն է դա:

Եկէք շէնացնենք մեր Տունը՝ Մայր Աթոռը. մեր պարտականութիւնների գիտակցական առողջ կատարումովը:

Միաբանութեան Մեր խօսքը ուղղելէ եւրք կը ցանկանայի իմ եղբայրական սիրոյ եւ շնորհակալութեան խօսքը ուղղել մեր Ս. Եկեղեցու Նուիրապետական Աթոռների գահակալներին՝ Կաթողիկոսին Մեծի Տանն Կիլիկիոյ. Պատրիարքներին Երուսաղէմի Առաքելական Աթոռոյն եւ Կ. Պոլսոյ պատմական Աթոռոյն իրենց ցոյց տուած անկեղծօրէն եւ ջերմօրէն եղբայրական վերաբերումին՝ հեռախօսային. թղթակցային եւ անչնական այցելութեամբ ի Նիւ Եորք. արտայայտուած բարեմաղթութիւններին եւ կատարած աղօթքներին համար: Թող Ամենակալն Աստուած առողջութեան բարիքները առատօրէն ցանէ նրանց կեանքին մէջ:

Շնորհակալութեան Մեր խօսքը նաեւ մեր բոլոր Թեմերին եւ Թեմական Առաջնորդներին. Թեմական մարմիններին ու հաւատացեալ ժողովրդի զաւակներին եւ համայնքային կազմակերպութիւններին. որոնց աղօթքների եւ բարեմաղթութեանց ոյժը զգացինք միշտ այս նեղութեան ծանր օրերին:

Շնորհակալութեան այս խօսքում ուզում ենք առանձնապէս յիշել Ամերիկահայոց Արեւելեան Թեմը ի Նիւ Եորք. իր Թեմական Սրբազան Առաջնորդով եւ

Թեմական Խորհրդով ու Առաքնորդարանի պաշտօնէութեամբ, որոնք Նիւ Եորքում օրինակելի վերաբերում ցոյց տուին Մեր նկատմամբ:

Շնորհակալութեան մասնաւոր խօսքս բոլոր բժիշկներին՝ օտար եւ հայ, որոնք իրենց գերագոյն կարելին ի գործ դրին Մեր հիւանդութեան դարմանումին համար: Թող Աստուած առատօրէն վարձահատոյց ըլլայ բոլորին:

Շնորհակալութեան անչափելի եւ անտարազելի խօսքս ուղղում եմ այն բարեկամ անձերին, որոնք աշխարհի չորս ծագերից իրենց զգացումները արտայայտեցին անձնական այցելութեամբ, հեռաձայնային խօսակցութեամբ եւ նամակներով, ծաղկեփունջերով: Ինչ համար նրանց սիրագեղ արտայայտութիւնը սքանչելի փաստն է իրենց սիրոյն հանդէպ մեր Սուրբ Եկեղեցիին եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

Եւ ահա, փա՜ռք Աստուծոյ, Մայր Հայրենիքի հողի վրայ եմ: Մեր ազգային գոյութեան խարիսխն է այս հողը, քրիստոնէական հաւատքով ոռոգուած, սուրբերու եւ հերոսներու արեամբ նուիրագործուած:

Իմ ամենախոր աղօթքն է, որ ամուր, ապահով եւ զարգացողական ընթացքի մէջ մնայ մեր հայրենիքը իր պետութեամբ, Եկեղեցիով եւ ժողովրդով: Յատուկ շնորհակալութիւններս եմ հայտնում Հանրապետութեան նախագահին՝ Վսեմաշուք Տիար Ռոպէրթ Քոչարեանին եւ պետական այն բարդրաստիճան անձերուն, որոնք յամախ իրենց բարեմաղթութիւնները յայտնեցին Մեզի բազում եղանակներով: Մասնաւոր շնորհակալութիւններ նաեւ Արցախի նախագահ՝ Վսեմաշուք Տիար Արկադի Ղուկասեանին, որ ի Միացեալ նահանգներ տուած իր այցելութեան ընթացքին անձամբ այցելեց Մեզ եւ իր բարեմաղթութեանց հետ միասին իր սէրը յայտնեց հանդէպ Հայ Առաքելական Եկեղեցւոյ:

Կոչ եմ անում մեր ժողովրդին որ իր աչքի բիբի նման մաքուր եւ առողջ պահի իր հայրենիքը: Հայ Առաքելական Եկեղեցին իր բոլոր միջոցներով կանգնած է կողքին մեր հայրենիքի պետական իշխանութեանց: Քրիստոնէական հաւատքը մեր հայրերի աւանդութեամբ մեզի փոխանցուած, մեր հայրենիքի առողջութեան հիմնական տուեալներուն առաջիններէն է եւ վստահ եմ որ մեր հայրենիքի առողջութիւնը ընդհանրական արժէք է, վեր՝ բոլոր մասնակի եւ ժամանակաւոր նկատումներէ:

Թող Աստուծոյ ամենատես Աչքը եւ ամենազօր Աջը հովանի եւ պահապան լինեն մեր ժողովրդին ի Մայր Հայաստան, յԱրցախ եւ ի ամենայն աշխարհի, ամէն»:

Այնուհետեւ միաբանական քափորը Վեհափառ Հայրապետին ուղեկցեց դեպի Վեհարան: